և յետոյ եկեալ 'ի Հռոմ՝ ըստ սահմանի կայսերաց՝ թագիւ երկաթեայ թագեցաւ 'ի Պապէն Կղէմնթոսէ Ե. երրորդէ. և 'ի Բիւզա քաղաքի՝ յօր տօնի փոխման Կուսին՝ ընկալաւ զհաղորդութիւնն յումեմնէ Գրաթէ 'ի կարգէ Բրիկաթուրաց. զոր խառնեալ մահադեղ 'ի սուրբ խորհուրդն՝ ետ կայսերն. որ 'ի նոյն օրն խօթացաւ, և յետ ինն աւուրն՝ մեռաւ. զոր ամենայն ոք գիտաց զմահ թագաւորին 'ի քահանայէն եղեալ։ Յաւուրս սորա թագաւորն Գռանցիոյ Փիլիպն կոչեցեալ գեղեցիկ՝ մինչ որսայր ի մայրիս՝ եհար զնա վարազ խոզ և ճեղքեաց զփոր նորա. և յետ երեք աւուր մեռաւ։ Եւ էր կին նորա յղի, և ծնաւ արու զաւակ. և յետ Ժ. աւուր և նա մեռաւ։

Զկնի մահուանն ինքնակալին Հռիգուսի՝ որ էր յամի Տեառն ՌՃՂԳ. ընտրողքն կայսերաց ընտրեցին երկուս 'ի կայսերութիւն, մի՝ զԼուտովիկ տուկն Պա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան